ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

___ « _____ » 2024թ. N __ -Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 95-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևանի քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» N 95-Ն որոշման 1-ին կետի 17-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և 17-րդ ենթակետից հետո լրացնել նոր՝ 18-րդ և 19-րդ ենթակետերը՝ հետևյալ բովանդակությամբ.

«18) «Մեկանգամյա օգտագործման» ֆիզիկական կրիչով տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 10 օրվա ընթացքում ակտիվացման (օգտագործելու) ժամկետով, մեկ ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ 100 դրամ.

19) «Մեկանգամյա օգտագործման» էլեկտրոնային եղանակով տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 10 օրվա ընթացքում ակտիվացման (օգտագործելու) ժամկետով, մեկ ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ 100 դրամ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ---------- ԱՐԱՄ ԹՈՐՈՍՅԱՆ
ստորագրություն

13 12 2024թ.

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 95-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» N 95-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում) նախատեսում է փաթեթներ, որոնք, ըստ նախատեսվածի, պետք է ուժի մեջ մտնեն 2025թ. հունվարի 1-ից՝ առաջացնելով լրացուցիչ ֆինանսական ծախսեր՝ հասարակության լայն շերտերի համար: Քաղաքացիների լայն շրջանակի համար, հատկապես դժվար կլինի վճարել «90 օր» և «365 օր» փաթեթների ձեռք բերման համար, քանի որ քաղաքացիները ստիպված կլինեն միանվագ խոշոր գումար ծախսել իրենց և իրենց ընտանիքների անդամների ուղեւորների համար:

2018 թվականից սկսած, Երևանի իշխանությանը հաջողվել է էականորեն բարելավել ներքաղաքային վերգետնյա տրանսպորտի որակն ու հարմարավետությունը: Այդուհանդերձ, պետք է փաստել, որ ներկա դրությամբ համակարգը դեռ հեռու է արդյունավետ համարվելուց թե՛ ուղևորափոխադրման հարմարավետության, թե՛ բեռնվածության և թե՛ չվացուցակին համապատասխանության և այլ առումներով:

Քանի որ Երևանի ներքաղաքային տրանսպորտի բարեփոխման հիմնական նպատակներից մեկը հանրային տրանսպորտի միջոցներին տարատեսակ միջոցներով առավելություններ տալու, այդ թվում՝ անձնական փոխադրամիջոցների օգտագործման սահմանափակումների միջոցով երթևեկության բեռնաթափումն ու ածանցյալ այլ խնդիրների (օրինակ՝ բարելավել արտանետումների կրճատման միջոցով բնապահպանական վիճակը) լուծումն է, ապա անհրաժեշտ է տարատեսակ գործիքների կիրառմամբ ավելի գրավիչ դարձնել հանրային տրանսպորտը: Այդ իմաստով հույժ կարևոր է, որպեսզի հանրային տրանսպորտը հասարակության հնարավորինս լայն շերտերի համար այլ փոխադրամիջոցների նկատմամբ էականորեն մատչելի լինի: Հակառակ պարագայում, մարդիկ կփորձեն ավելի հարմարավետ տրանսպորտային միջոցներից օգտվել՝ վճարելով նույնքան կամ քիչ տարբերվող գումար:

Հաշվի առնելով վերը թվարկված հանգամանքները և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 22-րդ հոդվածը, սույն նախագծով առաջարկվում է կատարել լրացումներ և Որոշմամբ նախատեսված փաթեթների հետ մեկտեղ նախատեսել նաև «Մեկանգամյա օգտագործման» ֆիզիկական կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու հնարավարություն, որը կարժենա 100 դրամ:

Կարևոր է նշել, որ քաղաքային տրանսպորտից մեկ ուղևորափոխադրման համար վճարելու հնարավորություն ստեղծելու շնորհիվ կբացառվի նաև քաղաքացու կողմից չիրականացված ուղևորափոխադրման համար վճարելը, ինչը, օրինակ կարող է պատահել «90 րոպե» և այլ բազմակի օգտագործման փաթեթների օգտագործման դեպքում:

Սոցիալական անարդարության մեղմացման, ցածր եկամուտներ ունեցող քաղաքացիների առանց այդ էլ դժվար կացությունը չխորացնելու և հանրային տրանսպորտի գրավչությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է պահպանել 100 դրամ արժողությամբ մեկանգամյա ուղևորափոխադրման հնարավորությունը՝ միաժամանակ ուղիներ փնտրելով տրանսպորտային համակարգի ֆինանսավորման և սուբսիդավորման համար, մասնավորապես, ավելի բարձր եկամուտներ ունեցող քաղաքացիներից գանձվող տուրքերի հաշվին լրացուցիչ միջոցներ ուղղել տրանսպորտային համակարգի սպասարկմանը՝ նկատի ունենալով, որ որակյալ հանրային ուղեւորափոխադրումների կազմակերպումը ազդում է ոչ միայն բուն տրանսպորտից օգտվողների, այլև երթևեկության բլոր մասնակիցների և ընդհանուր առմամբ, քաղաքի բնակիչների կյանքի որակի վրա:

«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԹՈՐՈՍՅԱՆ

ստորագրություն

13 12 2024թ.